ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ +37491435136,
Էլ. հասցե՝ foi@foi.am
www.foi.am

25.09.2023թ.
351-77

ՀՀ ներքին գործերի նախարար
Վահե Ղազարյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Ղազարյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2023 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 25-ը ընկած ժամանակահատվածում Ներքին գործերի նախարարության առանձին ստորաբաժանումների, Ոստիկանության աշխատակիցներին, ծառայողներին տրվե՞լ է արդյոք պարգևավճար, դրամական աջակցություն, խրախուսանք:
2. Եթե, այո, խնդրում ենք տրամադրել պարգևավճարներ և այլ դրամական աջակցություն հատկացնելու վերաբերյալ իրավական ակտերի պատճենները (նախարարի, առանձին ստորաբաժանումների ղեկավարների հրաման, որոշում և այլն) :
3. Տրամադրել պարգևավճար և դրամական այլ աջակցություն ստացած աշխատակիցների, ծառայողների ցանկը՝ ներառելով հատկացված գումարի չափը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոնորյան